

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

ԱՐԻԱՑԻՆԵՐԸ ՊԱԽԽՈՒՎԱՅՈՒՄ

Մեր վերջին հետազոտություններից մեկում ներկայացրել էինք մ.թ.ա. XIVդ. կազմված խեթական սեպագիր մի արձանագրություն, որը պարունակում էր Իսուվային (հայկ. Ծուփք) առնչվող երեք անձնանուններ: Դրանցից առաջինը աներկբայորեն խուրրիական էր (Կումարայի), իսկ մյուս երկուսը, ենթադրաբար, հնդարիական՝ Ուիտարնա ե Ուվա- [.....]: Հոդվածի՝ հրատարակության հանձնման պահին վերոհիշյալ հնդարիական անձնանունները, հատկապես առաջինը (երկրորդի պակասավոր վիճակի պատճառով ենթադրությունը թեական էր), որակել էինք որպես «արիական»²:

Այստեղ հարկ ենք համարում նշել, որ «արիական» հորջորջվող անձնանուն(ներ)ը չենք դիտարկել որպես դրա(նց)՝ մ.թ.ա. II հազ. Հյուսիսային Հնդկաստան մուտք գործած արիացիների կամ նույն ժամանակներում Առաջավոր Ասիայի տարբեր շրջաններում (Հյուսիսային Միջագետք, Միդիա, Փոքր Ասիա, Պաղեստին) վկայված «միտաննական արիացիների» լեզվի դրսևորում: Զմնարկվող անձնանունները որակվեցին որպես «արիական» գերազանցապես «միտաննական արիերենի» աշխարհագրական լայն ընդգրկման փաստի ճնշման տակ: Ընդ որում, ոչ պակաս կարևոր փաստարկ էր դիտվում ամենուրեք լավ վկայված խուրրի-արիական համակեցությունը (սիմբիոզ). այս երկու էթնիկական խմբերի կրողները սեպագրական աղբյուրներում մշտապես միասին են հիշատակվում:

Իսուվային և հարակից վերինեփրատյան շրջաններին վերաբերող խեթական տեքստերի հետագա հետազոտությունը հնարավորություններ է ընձեռում այս տարածաշրջանում մատնանշելու «արիերենի» այլ հետքեր ևս:

Մ.թ.ա. XVդ. վերջերին – XIVդ. սկզբներին կազմված՝ խեթական արքա Առնուվանդաս I-ի և վերինեփրատյան երկրների միջև կնքված «կոլեկտիվ պայմանագրում»³, որպես Իսուվայի հարևան Պախխուվայի⁴ ազնվականության ներկայացուցիչներ⁵, հիշատակվում են մի շարք անձինք, որոնք խեթական արքայի կողմից հրավիրվել էին մայրաքաղաք Խաթթուսաս՝ ապստամբած Պախխուվայի առաջնորդների դեմ արքայի

մեղադրանքները լսելու նպատակով: Ստորև ներկայացնենք պայմանագրի տեքստի համապատասխան հատվածը.

Դիմային կողմ

2) [...-d]u nu ka-a-aš a-pa-a-aš ^mLu-pa-ki-u-ut-ta-a[š.....]-ta-aš ^mAr-zi-u-ut-ta-aš

3) [...-u]t-ta-aš ^mWa-ar-ti-i-la-aš 2 LÚ^{MEŠ}[.....^m(-)]hu-wa-as-ša-a-ta-aš **BE-EL** ^{GIS}TUKUL

Վերոհիշյալ պախխուվացիներից երկուսի անունները՝ Arziutta և Lupakiutta, պարունակում են միևնույն –ut(t)a վերջածանցը (թերևս, մաս պակասավոր-u]t-ta-as-ը), որը խեթական և խուրրիական օնոմաստիկոնում⁶ այլևս վկայված չէ: Նախքան այս անձնանունները քննարկելը, անդրադարձ կատարենք դեպի Առաջավոր Ասիայի մեկ այլ տարածաշրջան՝ Սիրիա-Պաղեստին, որտեղ համաժամանակյա սեպագրական աղբյուրները հիշատակում են «միտանական արիերեոսով» բացատրվող տասնյակ անձնանուններ:

Տարբեր ուսումնասիրողներ առ այսօր հայտնաբերել են ավելի քան 40 անուններ⁷, որոնք թվագրվում են մ.թ.ա. XV-XIIIդդ.: Այդ ընդարձակ նյութերի շարքում կարող ենք առանձնացնել երկուսը, որոնց ստուգաբանությունը «արիերեոսի» հիման վրա որևէ կասկած չի հարուցում: Դրանք են՝ Indaruta⁸ և Yamiuta⁹, որոնք կրում էին երկու մանր քաղաքական միավորների՝ Ակշալայի և Գուդդասումայի կառավարիչները: Այս անունները թեֆոր կառուցվածք ունեն՝ Indar «Ինդրա» + -uta և Yami «Յամի» + -uta. Ինդրան և Յամին վեդայական դիցարանում լավ վկայված աստվածություններ են: Ինչ վերաբերում է -uta վերջածանցին, ապա այն նշանակում է «սիրելի, X-ից պահպանվող/հովանավորվող», այսինքն Ինդարուտա = «Ինդրայի սիրելի/Ինդրայից հովանավորվող», Yamiuta = «Յամիի սիրելի/Յամիից հովանավորվող»:

Այժմ վերադառնանք պախխուվական անձնանուններին: Հնարավոր է արդյոք դրանք ևս որակել որպես թեֆոր կառուցվածք դրսևորող «արիական» անձնանուններ:

Arziutta (^mAr-zi-u-ut-ta-as). Վերին Եփրատի ավազանից արևմուտք՝ խեթական տերության տարածքում այս անձնանվան հիմքը (arzi-) վկայված չէ. մույրը կարելի է ասել խուրրիական անձնանունների մասին¹⁰: Դա թույլ է տալիս քննարկվող անվան հիմքը փնտրել տեղական ինչ-որ լեզվում, մույնիսկ ժամանակագրորեն ավելի ուշ հատվածում:

Անհավանական չի թվում Գ.Ջահուկյանի կողմից առաջարկված համադրությունը Վանի թագավորության դիցաբանի ⁶Aršibedini աստվածության հետ, որը վկայված է «Մեերի դռան» արձանագրության մեջ¹¹ և որի հիմքում մասնագետները իրավացիորեն տեսնում են ուրարտ.

arsibi բառը. վերջինիս համահնչունությունը հայ. *արծիւ*-ի հետ թույլ է տվել այն բխցնելու հնդեվր. *rg'ipijo- հիմքից (d-ն ուրարտերենի վերջածանց է)¹². Զննարկվող ուրարտական դիցանվան կապը *արծիւ*-ի հետ էլ ավելի է ամրապնդվում Ս.Հմայակյանի դիտարկման շնորհիվ: Սերբար թեփեից հայտնաբերված բրոնզե երեք թիթեղների վրա արծիվը պատկերված է որպես գերագույն աստված Խալդիի սուրհանդակ, այնպես ինչպես այն առկա է այլ ժողովուրդների առասպելաբանական համակարգերում (օր., հունական, խեթական և այլ)¹³:

Այսպիսով, հնարավոր ենք համարում առաջարկելու պախխուվական arzi- բառահիմքը համեմատել ուրարտ. aršibi-, հայ. արծիւ բառերի հետ: Հնչյունական համապատասխանության խնդիր գրեթե չկա, քանի որ խեթական սեպագրական համակարգում z-ը կարող էր արտահայտել q, g, ծ կամ շփական-աուլական որևէ հնչույթ:

Lupakiutta (^mLu-pa-ki-u-ut-ta). Այս անձնանվան երկրորդ վանկի ընթերցման հարցում մասնագետների շրջանում տարակարծություններ կան: Ա.Սեյսը 1930թ. տեքստի առաջին՝ մասնակի թարգմանաբար ներկայացրած հրատարակության մեջ¹⁴ այն ընթերցել էր pa: Ավելի ուշ Օ.Գըրնին, նույնպես առանց հիմնավորման, առաջարկեց u¹⁵, որը և մտավ մասնագիտական հրատարակություններ. խեթական անձնանունների բառարանում և այլուր առկա է ^mLu-u-ki-u-ut-ta-aš ձևը: Վ.Խաչատրյանը նախընտրել է Ա.Սեյսի ընթերցումը¹⁶, որը միանգամայն ընդունելի է, սակայն ոչ միայն u և pa նշանների արտաքին որոշ մնանությունից բխող մեկնաբանության տեսանկյունից:

Խեթական սեպագիր և հիերոգլիֆային լուվիական մեծաքանակ անձնանունների շարքում luk-ով սկսվողները իսպառ բացակայում են, որը չնայած չի կարելի լուրջ փաստարկ համարել, սակայն այնուամենայնիվ անհրաժեշտ է հաշվի առնել: Միանգամայն այլ է իրավիճակը Lupakiutta-յի պարագայում: Lupakki անվան ավելի քան մեկ տասնյակ հիշատակությունները թույլ են տալիս կողմնորոշվելու դեպի Lupakiutta ընթերցումը: Եվ որ մեր ընտրության հարցում առանձնակի կարևոր է, վերոհիշյալ Lupakki անվան կրողների մի մասը (եթե ոչ մեծ մասը), համաձայն տեքստերի, հստակորեն առնչվում է վերինեփրատյան տարածաշրջանին:

Lupakki անունը (որոշ դեպքերում՝ Lubakki ձևով) հանդիպում է առ այսօր հրատարակված շուրջ մեկ և կես տասնյակ խեթական տեքստերում: Այս անունը կրողներից միայն մեկն է թվագրվում հաստատապես մ.թ.ա.XIVդ.: Մյուս բոլոր դեպքերում տեքստերը վերաբերում են մ.թ.ա.XIIIդ., գերազանցապես Խաթթուսիյի III – Թուդխալիյաս IV ժամանակահատվածին (մոտավորապես 1260-1220-ական թվականներ):

Ընդ որում վերջիններից երեքը (թերևս, չորսը) վստահաբար առնչվում են Իսուվային: Մյուս դեպքերում, տեքստային ինֆորմացիայի սահմանափակ բնույթի պատճառով, դժվար է հետևություն անել դրանց՝ Իսուվայի հետ առնչակցության մասին, չնայած չի կարելի այդ բացառել: Ստորև ներկայացնենք Lupakki անունը կրող Իսուվային առնչվող անձանց հիշատակող տեքստերի համառոտ քննությանը:

1) **KBo XVIII 4** – Իսուվայի արքայի (անունը չի հիշատակվում) նամակը խեթական արքունիքի քարձրաստիճան պաշտոնյա **GAL QARTAPPI** («գլխավոր կառավար») Լուպակկիին¹⁷. որտեղ արքան վերջինիս դիմում է որպես «իմ սիրելի հայր» (**ABI DÜG.GA-YA**): Արդյոք Լուպակկին Իսուվայի արքայի հայրն էր, վերոհիշյալ արտահայտությունից չի կարելի միանշանակ եզրակացնել, չնայած այդպիսի մեկնաբանությունը ճշմարտանման է ստորև ներկայացվող հաջորդ վկայությունից:

2) **KUB XXXI 68** – Մ.թ.ա.XIIIդ. երկրորդ կեսով քվազրվող տեքստ, որտեղ շարադրված են խեթական արքա Թուդխալիյաս IV-ի դեմ կազմակերպված դավադրության մանրամասները¹⁸: «Գլխավոր կառավար» Լուպակկին հիշատակվում է որպես դավադրության մասնակիցներից մեկը: Նույն տեքստում նշվում է այն մասին, որ դավադիրների շարքերում էր նաև Իսուվայի արքան:

3) **KUB XL 80** – Իսուվայի արքա Արիշարրումայի կնոջ՝ քագուհի Կիլուշխեայի մահվան հանգամանքները պարզաբանող տեքստ: Ի թիվս այլ անձանց, հիշատակվում է Լուպակկին (**Lupakki** և **Lubakki** ձևերով):

4) **Korucutepe 6 (68-285)** – Մ.թ.ա.XIIIդ. Իսուվայի կարևոր հնավայրերից մեկից՝ Կորուցութեփեից հայտնաբերված հիերոգլիֆային կնքադրոշմ¹⁹. ընթերցումը՝ **Lu-pa-ki**:

Սեր կարծիքով, իրավացի էր Հ.Գ.Գյուտերբուկը, որ ժամանակին հարց էր քարձրացրել Կորուցութեփեի կնիքի տիրոջ, **KBo XVIII 4**-ի և **KUB XXXI 68**-ի Լուպակկի անունը կրող անձանց նույնականության օգտին²⁰:

Իրոք, վերոհիշյալ չորս դեպքերում էլ Լուպակկին սերտորեն առնչվում է Իսուվային, ընդ որում նրա կնքադրոշմը առկա է Իսուվայի գլխավոր քաղաքներից մեկում. նա այստեղ պետք է որոշակի վարչական ֆունկցիաներ կամ առնվազն կալվածք ունենար: Թերևս, Կորուցութեփեն այս պետության մայրաքաղաքն էր, քանի որ այստեղ առկա են նաև Իսուվայի արքա Արիշարրումայի և քագուհի Կիլուշխեայի կնիքները: Լուպակկիի առնչակցությունը Իսուվայի արքայատոհմին հատուկ ուսումնասիրության կարիք ունի, սակայն ներկայումս կարելի է ենթադրել, որ խեթական արքունիքի «գլխավոր կառավարը» կարող էր լինել մեկը Իսուվայի ազնվականներից, որը մտել էր խեթական ծառայության և նրա որդին հասել էր արքայական իշխանության: Թե Իսուվայի՝ առայժմ

մեզ հայտնի երկու արքաներից որ մեկի (Արիշարարումայի թե Էլիշարարումայի) հայրն էր Լուպակկին, պարզ չէ: Լուպակկի անունը պարունակող մյուս տեքստերը, հնարավոր է, վերաբերում են խտվացի Լուպակկին (բացառությամբ, թերևս, Սուպպիլուլիումաս I-ի գորավարից [KBo V 6 և KUB XXXI 121]):

Ինչպես կարելի է ստուգաբանել Լուպակկի անձնանունը: Որքան մեզ հայտնի է, առայժմ միայն Ն.Միրոնովն էր անդրադարձել այս խնդրին²¹: Առաջավոր Ասիայի տարբեր տարածաշրջանների գրավոր աղբյուրներում հիշատակվող արիական լեզվական իրողությունների շարքում մա ընդգրկել էր մաս վերոհիշյալ անձնանունը, համեմատելով այն հին հնդկ. *loṣāka* «չախկալի տարատեսակ», *loṣāśa* «չախկալ, աղվես» բառերի հետ: Այնուամենայնիվ, հեղինակը այնքան էլ վստահ չէր այս համադրության վրա, նշելով, որ Լուպակկի անվան հիմքում կարող էին ընկած լինել ասիանիկ (ընդգծումը մերն է - Ա.Բ.) **luba*, *lub(a)-ija*, կարիերեն *labios* բառերը:

Ակադ. Գ.Ջահուկյանը, քննարկելով հայերենի և խեթա-լուվիական լեզուների միջև առնչակցությունների խնդիրը, միջին խեթական տեքստերից մեկում հիշատակվող *Aliwaša* անձնանվան հետ էր համադրել հայ. *աղուես* բառը, որին կցված ծանոթագրության մեջ հարցականի տակ նշելով հետևյալը. «Հետաքրքրական է նշել, այս կապակցությամբ, մույմ պայմանագրի՝ թերևս կենտումային լեզվի պատկանող *Lupakiu-ta-ŋ* *Aliwašu*-ի համեմատությամբ(?)»²²:

Երկրորդ համադրության առնչությամբ անհրաժեշտ է նշել հետևյալը: Խեթական արքա Առնուվանդաս I-ի (մ.թ.ա.XVդ. վերջ – XIVդ. սկիզբ) օրոք կնքված սույն պայմանագրում²³ հիշատակվող *Aliwaša* անձնանունը միայն արտաքինապես է նման հայ. *աղուես*-ին: Այն բարդ կառուցվածք ունեցալ անձնանուն է, կազմված *ali-* (անհայտ ծագում ունի) և լուվիերեն *wašu-* «լավ, բարի» բառերից. երկրորդ բաղադրիչը լուվիերենում (մաս խեթերենում՝ *aššu-*) շատ տարածված անձնանվանակերպ է:

Ինչ վերաբերում է հայ. *աղուես*-ին, ապա այն ծագում է **սլք-*, **լսր-* հիմքից, որից հնդեվրոպական լեզուներում կազմված են շնագզիների անվանումներ (չախկալ, գայլ, աղվես)²⁴: Այսպես, ավեստ.*surpi-s* (*lupi-s*) «չուն», *raopi-s* «աղվես, չախկալ», միջ.պրսկ. *rōpās*, նոր պրսկ. *rōbāh* «աղվես», հին հնդկ. *loṣāśā* «չախկալ, աղվես», լատ. *volpes* «աղվես», *lupus* «գայլ», հուն. *λύκος* «աղվես» և այլն:

Փաստորեն, ակադ. Գ.Ջահուկյանը ճիշտ էր նկատել *Lupakitta* անվան առնչակցությունը վերոհիշյալ հնդեվրոպական բառահիմքին, սակայն *Aliwaša* - *աղուես* համարժեքության փաստարկի ազդեցության տակ այն չէր համադրել *Lupakki*-ի հետ:

Եթե Լուսակկի անձնական հիմքում հնարավոր է տեսնել վերոհիշյալ հնդեվրոպական հիմքը, ապա -k(k)i-ն անհրաժեշտաբար պետք է դիտել որպես անձնականակերտ վերջածանց: Խեթական տեքստերում վկայված անձնանունների շարքում, որքան մեզ հայտնի է, ընդամենը տասներկուսն են ավարտվում -k(k)i-վ, որոնցից ամենևին ոչ բոլորի համար կարելի է վստահաբար առանձնացնել ենթադրելի -ki վերջածանց: Ստորև ներկայացնենք այդ ցուցակը²⁵.

Akarkiš	(KUB XXIII 72)
Dulakki	(HKM 68)
Garnalaki	(CCT 1 34 - կապաղովկիական վտույի աքքադերեն տեքստ)
Hebattarakki	(KUB XXIV 14 – ծխսապաշտամունքային տեքստ)
Nahhuwaški	(KUB XXVI 62)(անկա է նաև Nahhuwa անձնանուն)
Pašakki	(HKM 100)
Pahinakke և Pihinakki	(HKM 10,19)(կա նաև Pihina)
Pizzumaki	(HKM 17)(կա նաև Pizzumuri)
Šuplaki և Šuplakiya	(HKM 106,107)
Tarwaški(š)	(HKM 73; KUB V 22; KUB XIII 35)
Tišpinki	(KBo III 13 – Պարասիի արքա՝ Աքքադի արքա Նարամսինի տեքստում)
Tiššinki	(KBo III 13 - Գուրասուրայի արքա միևնույն տեքստում)

Վերոհիշյալ ցուցակում ուշադրության են արժանի հետևյալ դիտարկումները.

1) Միայն երեք դեպքում է հնարավոր վստահաբար առանձնացնել -k(k)i վերջածանցը, քանի որ միևնույն հիմքից վկայված են այլ կազմավորումներ (Nahhuwaški, Pahinakke/Pihinakki, Pizzumaki): Թերևս, սրանց շարքին կարելի է դասել նաև Pašakki-ն և Tarwaški(š)-ը²⁶:

2) Անձնանուններից ոչ մեկի հիմքը հնարավոր չէ բացատրել խեթա-լուվիական լեզուների հիման վրա²⁷:

3) Այս անձնանունները կրող մարդիկ ներկայացնում են այն աշխարհագրական տարածքները, որտեղ ենթադրելի է կասկական հոծ բնակչություն: Այսպես, ցուցակում ներկայացված տասներկու անուններից վեցը վկայված են Մաշաա հյոյուքի արխիվում, որը գտնվում էր կասկական գոտու ամփջական հարևանությամբ: Նույնը հաստատ է նաև KUB XXVI 62-ում հիշատակվող երկու անունների համար: Akarkiš անունը կրում էր Իսուվայի առաջնորդներից մեկը, այսինքն, սա էլ խե-

թական չէր: Աբբադի արքա Նարամսինի փոքրասիական արշավանքները նկարագրող տեքստի երկու արքաների (Tišpinkī և Tiššinkī) անուններին կցված տեղանունները տեղադրվում են Հալիսից արևմուտք՝ ժաման. Թուգ լճից հարավ-արևելք կամ արևելք²⁸, այսինքն, խեթերի բնօրրանից դուրս: Ինչ վերաբերում է վերջին անվանը (Garnalaki), ապա կապադովկիական շրջանի տեքստերում շատ են ոչ խեթական անունները:

Ինչպես էլ որ լուծվի ենթադրյալ -k(ki) վերջածանցի լեզվական պատկանելության խնդիրը, դրա առկայությունը Լուպակկի անձնանվան մեջ գրեթե հաստատ է վերը բերված նյութերի հիման վրա:

Ավարտելով Լուպակկի անվան հետ կապված մեկնաբանությունները, անհրաժեշտ է նշել դրան, մեր կարծիքով, առնչվող ևս մեկ բառակ:

Խեթական տեքստի անվանական դիցաբանի՝ խուրբիական ծագում ունեցող կարևոր աստվածություններից էր ռազմի աստծո ֆունկ-ցիաներով օժտված Նուպատիկը (սովորաբար գրվում է ⁴Nu-pa/ba-ti-ik/g)²⁹: Հյուսիսային Միջագետքի Նուզի խուրբիական քաղաքի տեքստերում այս անունը հիշատակվում է մահ ⁴Lubadaga ձևով, որ վկայում է ո: 1 հերթագայության առկայության մասին:

Հատկանշական է, որ խուրբիական գերագույն աստված Թեշուրի կնոջ՝ Հալեպ քաղաքի Խեբատ աստվածուհու հայտնի ծեսը ներկայացնող տեքստի տարբերակներից մեկում Նուպատիկի անունը գրված է առաջին հայացքից տարօրինակ եղանակով՝ ⁴Lu-pa-ki-ta (KUB XXVII 13 Դիմային կողմ I 6), իսկ մյուսում՝ ⁴Lu-pa-ti[-....](KBo VII 27.9): Առաջին գրությունը կարող էր գրչի վրիպման արդյունք լինել: Հարկ է նշել, որ ո: 1 հերթագայությունը բառասկզբում վկայված է հենց Նուզիում (Lakipu : Nakipu)³⁰, ինչպես մահ տարբեր դիրքերում՝ խեթական տեքստերում³¹:

Նուպատիկ դիցանվան և Լուպակկի անձնանվան միջև հնարավոր կապի մասին ենթադրությունը չի հենվում միայն գրության մեմորիայի վրա: Բանն այն է, որ Նուպատիկը ռազմի աստվածություն էր, իսկ գայլը կամ շունը հնդեվրոպական առասպելաբանության մեջ համդես են գալիս որպես ռազմի աստված և սերտորեն առնչվում են գերագույն աստծո հետ. սույն աստվածության ուղեկիցները գայլերն են³²:

Այնուամենայնիվ, առայժմ նպատակահարմար ենք համարում ձեռնպահ մնալ վերոհիշյալ Nupatik/Lupatik դիցանվան և Լուպակկի անձնանվան միջև կապ գտնելու ակնկալիքից, այն թողնելով միայն որպես աշխատանքային վարկած:

Այսպիսով, հողվածում քննարկվող Arziutta և Lupakiutta անձնանունների -ut(t)a վերջածանցի առկայությունը հիմք է տալիս ենթադրելու դրանց «արիական» ծագումը:

Ամփոփելով սույն հետազոտությունը, անհմար է չնշել այս և մեր նախորդ հոդվածում քննարկվող «արիական» անձնանունների առկայությունից բխող հնարավոր եզրակացությունները:

Մ.թ.ա.XV-XIV դարերում Վերին Եփրատի ավազանում և դրա մերձակցությամբ տեղադրվող քաղաքական միավորներում, այսպիսով, վկայված են հին հնդկերենով (վեդայական կամ սանսկրիտի փուլ) ստուգաբանվող մի շարք անձնանուններ, որոնց կրողները տեղական ազնվականության ներկայացուցիչներ են եղել: Այս երկու երկրներին պահպանված զգալի թվով անձնանունների լեզվաբանական քննությունը դեռևս չի իրականացվել, սակայն նախնական դիտարկումներից կարելի է եզրակացնել, որ այստեղ միանշանակ առկա են տարբեր լեզուների հետքեր (այլ հնդեվրոպական և խուրրիերեն):

Օրինակ, հստակ խուրրիական Ali-Sarruma, 'Anziliš, Kili, 'Kiluššepa, Tahišalli(?) և այլն³³: Խեթա-լուվիական լեզուները ներկայացված են Šanta, Walwaziti և այլ անուններով: Սրանց կողքին առկա են էլ ավելի մեծաքանակ անուններ, որոնց լեզվական պատկանելությունը առայժմ հնարավոր չէ պարզել. օրինակ, Agga, Aritku, Hateš, Hiniš, Huruš, Kalimuna, Kasiyaraš, Kuwaš, Mahuilu, Piggana, Ušapa, Waltahis և այլն:

Սույն իրողությունից բխող առավել հավանական ենթադրությունն այն է, որ ուսումնասիրվող տարածաշրջանը մ.թ.ա.II հազ. կեսերին իրենից ներկայացնում էր տարբեր էթնոլեզվական արեալների հանդիպավայր:

Անհրաժեշտ ենք համարում ուշադրություն հրավիրելու նաև մեկ այլ կարևոր հանգամանքի վրա: Պախխտովայում, ինչպես նաև վերջինիս հարևան Իսուվայում արիերենի ներկայությունը կարող է հնարավորություն ընձեռել ավելի լրջորեն մոտենալու Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ» երկում հիշատակվող հնդիկ եղբայրներ Դեմետրի և Գիսանեի ու նրանց սերունդների առկայությանը Տարոնում: Մատենագիրը սրանց գործունեությանն է վերագրել Աշտիշատի ու Քարքե լեռան վրա գտնվող բազիլիկների կառուցումը: Այս առնչությամբ անհմար է շրջանցել վերոհիշյալ տարածքի հետ խեթական աղբյուրում հիշատակվող Պախխտովայի մերձակցության, եթե ոչ նույնականության փաստը: Վերջինս, դատելով ըստ ամենայնի, պետք է գտնվեր Բյուրակնի լեռների շրջանում՝ ներառելով, թերևս, Տարոնի մի մասը³⁴: Ոչ պակաս գրավիչ է Դեմետրի և Գիսանեի կողմից Վիշապ քաղաքի կառուցման մասին հիշատակությունը, մի անուն, որ կարող է իր զուգահեռը գտնել Պախխտովայի ապստամբության առաջնորդի անվան մեջ (Ušapa):

P.S. – Թվում է, բոլոր հիմքերը կան վերանայելու ուրարտական արձանագրություններում վկայված որոշ քանակությամբ հատուկ անունների համար ժամանակին տարբեր մասնագետների կողմից առաջարկված ստուգաբանությունները: Հայկական լեռնաշխարհի տարբեր

շրջաններում և հարակից տարածքներում առնվազն մ.թ.ա. III հազ. կեսերից կանոնավոր կերպով հանդես եկող հնդիրանական (կամ հնդարիական) լեզուների հետքերը ինչ-որ կերպ պետք է պահպանվեին մեր տարածաշրջանի նյութերում: Այժմ վաղ է այդպիսի մի շարք դեպքերի համար հիմնավոր մեկնաբանություն առաջարկել, սակայն մշել որպես հնարավոր տարբերակ, այնուամենայնիվ, անհրաժեշտ է:

^dArubani/Arubani – Ուրարտական դիցաբանի գլխավոր աստվածություններից մեկը՝ գերագույն աստված Խալդիի կինը³⁵: Մ.Հմայակյանի կողմից համադրվել է միտանական դիցաբանի «արիական» դիցախմբի «Uruwana-ssil-ի հետ (= հնդկ. Վարունա)³⁶:

^dSelardi – ուրարտական դիցանուն («լուսնի աստված»)³⁷:

^dAdaruta – ուրարտական աստվածություն³⁸, որին Գր.Ղափանցյանը համադրում էր սեմական Atar/Adar/Astor(et)/Astarta աստվածուհու հետ³⁹: Ինչու սեմական, եթե ավելի հավանական է հնդեվրոպական – հնդարիական ծագումը, օրինակ, atar «կրակ, խուր» + -uta («հրածին» մոտավոր իմաստով):

^{Ur}Ardini – ուրարտական տեղության գլխավոր սրբավայրը՝ Խալդիի պաշտամունքի կենտրոնը (= ասորեստ. աղբյուրների Musasir), որի անվանումը Գ.Ջահուկյանը բխեցնում էր ardi «աստված» բառից⁴⁰:

Վերոհիշյալ ցուցակը կարելի է ընդլայնել ի հաշիվ ոչ միայն անվանաբանական, այլև այլ բնույթի նյութերի:

ARAM KOSYAN.

ARYANS IN PAIHUWA

In one of the previous articles the author had pointed on the existence of two “Aryan” personal names in the cuneiform Hittite text of the XIVc. B.C. dealing with the country of Isuwa (*Uiarna* and *Uwa-[...]*) and one Hurrian (*Kumarpî*). Further studies had revealed two more names born by the elders of the neighboring Pahhuwa – *Arziutta* and *Lupakiutta*. Both names are built with the well-known Old Ind. suffix *-ut(t)a*. As to the stem of these names, *Arzi-* could be compared with the Urartian (of Old Armenian origin) *arsibi*, the another – with the IE **ulp-*, **lup-* “wolf, dog, chakal”.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. A. K o s y a n. An Aryan in Isuwa. - Iran and the Caucasus, vol.10/2 2006, p. 1–6.
2. «Աբիացի» և «արիերեն» տերմինները կիրառվում են մշելու հնդեվրոպական լեզվաընտանիքի հնդիրանական (կամ հնդարիական) լեզվախմբի անդամ որևէ լեզու (կամ դրա բարբառները): Հարկ է մշել, որ վերջին շրջանում սիրողական բնույթի որոշ հրապարակումներում «արիացի» տերմինը

կիրառվում է որպես «հնդեվրոպացի» տերմինի համարժեք: Ավելին, սույն հեղինակները հավասարության նշան են դնում «հնդեվրոպացի», «արիացի» և «հայ» տերմինների միջև, եզրակացնելով, որ քաղաքակրթության արշալույսին և նույնիսկ շատ ավելի վաղ արդեն գոյություն ուներ մեծաքանակ «հայ ժողովուրդ», որից ժամանակ առ ժամանակ անջատվել են վերաբնակիչների խմբեր՝ սկզբնավորելով մնացած հնդեվրոպական և ոչ-հնդեվրոպական ժողովուրդներին («Հայկական լեռնաշխարհը հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան» խորագրով հայագիտական գիտաժողովի թեզեր, Եր., 2004, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ):

3. Հրատ.՝ A. H. S a y c e. Hittite and Moscho-Hittite. - *Revue hittite et asianique* 1, 1930, p.1ff. (թարգմանաբար); O. R. G u r n e y. Mita of Pahhuwa. - *Liverpool Annals of Archaeology and Anthropology* 28, 1948, p.32ff. (թարգմ.); Վ. Խ ա ղ ա տ ր յ ա ն. Հայաստանը մ.թ.ա.XV-VIIդդ.. Եր., 1998, էջ.87-93 (հատված.թարգմ.); Ա. Ք ո ս յ ա ն. Անի-Կամախը խեթական դարաշրջանում. - Պատմա-քառասիրական Հանդես, 2002/3, էջ 227 (հատված.):
4. Պախխուվայի համար հստակ տեղադրություն առայժմ հնարավոր չէ առաջարկել. քերես, այն պետք է փնտրել Իստվայից արևելք, հյուսիս-արևելք՝ Բյուրակնի լեռների շրջանում (այս երկրի անվան գրության ձևերը, տեղադրման և անվան ստուգաբանության վերաբերյալ առկա կարծիքները տես Ա. Ք ո ս յ ա ն. Հայկական լեռնաշխարհի տեղանունները. Եր., 2004, էջ.75-77,116-117):
5. Տեքստի սկզբում առկա վնասվածքների պատճառով կորել է այն հատվածը, որտեղ պետք է նշվեր այստեղ հիշատակվող անձանց ելակետը: Ամենայն հավանականությամբ, սրանք պախխուվացիներ էին, քանի որ անձնանվանը կցված չեն համապատասխան տեղանուններ կամ կարգավիճակը բնորոշող տերմիններ, ինչը առկա է պայմանագրի երկրորդ մասում, որտեղ խեթական արքան դիմում է Իստվայի և մյուս շրջանների «ավագներին»:
6. E.Laroche. Les Noms des Hittites. Paris, 1966; i d e m. Les noms des Hittites: Supplément. - *Hethitica* IV, 1981, p.1ff.; S. A l p. Hethitische Briefe aus Maşat Höyük. Ankara, 1991, S.48ff.
7. N. D. M i r o n o v. Aryan Vestiges in the Near East of the Second Millenary B.C.. - *Acta Orientalia* XI, 1933, p.140ff.; R. T. O' C a l l a g h a n. Aram Naharaim. Roma, 1948, p.56ff.; M. M a y r h o f e r. Die Indo-Aryer im Alten Vorderasien. Wiesbaden, 1966 (passim):
8. 'en-da-ru-ta/'m-tar-u-da = Ind(a)ruta, որի համարժեքը առկա է Ռիզվեդայում՝ Indrota/Indrauta (M i r o n o v. loc.cit., p.175f.; R. T. O' C a l l a g h a n. loc.cit., p.61,152): Ն.Միրոնովը նշում էր, որ Վեդաներում վկայված է մահ Indara ձևը: Նա միաժամանակ արիական ստուգաբանություն էր առաջարկում Ալշապա քաղաքանվան համար, որի կառավարիչը վերոհիշյալ Ինդարոստան էր (Akšapa = հին հնդկ. *aksāpā «անսասան» - p.185):
9. 'ya-mi-u-ta (R. T. O' C a l l a g h a n. loc.cit., p.61,152):
10. I. J. G e l b, P. M. P u r v e s and A. A. M a c R a e. Nuzi Personal Names. Chicago, 1943.

11. Г. Б. Дж а у к я н. О соотношении хайасского и армянского языков. — Պատմաքաղաքագիտական հանդես 1988/2, Կ. 71, 81; Н. В. А р у т ю н я н. Корпус урартских клинообразных надписей. Ер., 2001, N.38 112, 1120.
12. И. М. Д ъ я к о н о в. Заметки по урартской эпиграфике. - Эпиграфика Востока 4, 1951, с.115 прим.3; Э. А. Г р а н т о в с к и й. Ранняя история иранских племен Передней Азии. М., 1970, с.293ссл.; Г. Б. Дж а у к я н. Урартские заимствования в армянском языке. — В сб.: "Культурное наследие Востока", Ленинград, 1985, с.369; У. Գ. Հ մ ա յ ա կ յ ա ն. Վանի քաղաքապետության պետական կրոնը. Եր., 1990, էջ 58 և այլն:
13. У. Գ. Հ մ ա յ ա կ յ ա ն. նշվ.աշխ., էջ 59.
14. А. Н. S a y c e. loc.cit., p.5.
15. О. R. G u r n e y. loc.cit., p.33.
16. E. L a r o c h e. Les Noms, 1966, p.107 (այստեղ մասնակցում ամենամեծ տեքստային հղումները):
17. Տեքստի տառադարձումը և թարգմանությունը տես Н. К l e n g e l. Nochmals zu Išwa. - Oriens Antiquus XV, 1976, S.86f.
18. Տեքստի մասնակի հրատարակությունը և մեկնաբանությունը տես R. S t e f a n i n i. Studi ittititi. - Athenaeum 40, 1962, p.22ff.
19. H. G. G ü t e r b o c k. Hittite Hieroglyphic Seal Impressions from Korucutepe. - Journal of Near Eastern Studies 32/1-2, 1973, p.142, N.6.
20. H. G. G ü t e r b o c k. loc.cit., p.142 n.24; մասն. A. Ü n a l. Hattušiliš III.1, Heidelberg, 1971, S.119f. (առաջարկում է մույնացնել KUB XXXI 68, Korucutepe, KBo IX 31 և KUB XXIII 45-h' Լուպակկի անունը կրող անձանց). J. d e R o o s. Who was Kilušhepa?. - Jaarbericht van het Vooraziatisch-Egyptisch Geselschap „Ex Oriente Lux“ 29, 1985-86, p.75 (այս Լուպակկիի հետ է համադրում խեթական քաղաքում [Խաթթուաիլիս III-ի կինը՝ Պոտրոլիսիան] առաքված KBo XVIII 1 մամակում հիշատակվող համանուն անձնավորությանը):
21. N. D. M i r o n o v. loc. cit., p.205f.
22. Գ. Բ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն. մաթադրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 340, ծանոթ.39.
23. A. K e m p i n s k i u n d S. K o š a k. Der Išmeriga-Vertrag, Die Welt des Oriens 5/2, 1969-1970, S.191ff.
24. J. P o k o r n y. Indogermanisches etymologisches Wörterbuch, Bd.I, Bern und München, 1959, S.1179.
25. Այս ցուցակում հաշվի են առնված փոքրասիական անձնանունների հետևյալ բառարանների և նորահայտ տեքստերի նյութերը՝ E. L a r o c h e. Les Noms des Hittites, 1966 (NH); i d e m. Les noms des Hittites: Supplément; S. A I p. Hethitische Briefe aus Maşat Höyük, Cuneiform Texts from the British Museum (CCT); J. - M. D u r a n d e t E. L a r o c h e. Fragments Hittites du Louvre. In: Atatürk Memorial, Paris, 1982, p.73-107; G. B e c k m a n a n d H. A. H o f f n e r. Hittite Fragments in American Collections. - Journal of Cuneiform Studies 37/1, 1985, p.1-60.
26. Tarwaški(š)-ի հիմքում Ս.Ալիք հակված էր տեսնելու կապադոկիական ժամանակաշրջանի փոքրասիական դիցաբանի աստվածներից մեկի՝

- Tarawa-ի անվանումը (S. A I p. Hethitische Briefe. S.99): Hebatarakki անվան մասնատման հարցում է. Լարոշը պայմանականորեն առաջարկում էր Hebat-arakki կամ Hebat-tarakki (E. L a r o c h e. NH. p.348), այսինքն այստեղ հակված չէր առանձնացնելու խնդրո առարկա վերջածանցը: Ամեն դեպքում, այս անձնանունը վկայված է խուրրիերեն լեզվով գրված ծիսական տեքստում, որը, սույն անձնանվան հիմքում ընկած խուրրիական Hebat աստվածուհու անվան հետ միասին, կարող է նշել դրա խուրրիական, համենայնդեպս, ոչ խեթական ծագումը:
27. Բացառությամբ, բերես, մախորդ ծանոթագրության մեջ նշված Tarwaški(\$)-ի, որի առնչակցությունը Tarwa դիցանվանը դժվար է ապացուցել:
 28. Այս մոտավոր տեղադրությունը հենվում է Ստրաբոնի կողմից հիշատակվող Garsaura տեղանվան (S t r a b o XII 537,538,568, XIV 663) հետ համադրման վրա (E. L a r o c h e. Etudes de toponymie anatolienne. - Revue hittite et asianique 69, 1961, p.82):
 29. V. H a a s. Geschichte der hethitischen Religion (= Handbuch der Orientalistik. Abt.1, Bd.15). Leiden, 1994, S.850ff.
 30. I. J. G e l b, P. M. P u r v e s and A. A. M a c R a e. loc.cit., p.94.
 31. Օրինակները տես H. K r o n a s s e r. Etymologie der hethitischen Sprache.I, Lief.2. Wiesbaden, 1963, S.58ff.
 32. Мифы народов мира. том 1, М., 1987, с.242.
 33. Խեթագիտական հրատարակություններում գերիշխում է այն տեսակետը, ըստ որի Իսուվան գերագանցապես խուրրիաբնակ է եղել (I. S i n g e r. Hittites and Hattians in Anatolia at the Beginning of the Second Millennium B.C.. Journal of Indo-European Studies 9, 1981, p.123; G. W i l h e l m. The Hurrians. Warminster, 1989, p.25; A. Ü n a l. Studies in Ancient Anatolian Magical Practices: The Hittite Ritual of Hantitassu from the City of Hurma Against Troublesome Years (CTH 395), Ankara, 1996 p.9f.: նաև Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն, էջ 323): Հարկ է նշել, որ այս ենթադրությունը հիմնականում հենվում է Իսուվայի մ.թ.ա.XIII դարի անվանաբանական նյութերի վրա, որ իրոք պարունակում է խուրրիերեն անձնանունների հոծ շերտ. այս փուլում Իսուվայի իշխող դինաստիան խուրրիական էր:
 34. Պախխուվայի տեղադրության համար տես վերը՝ ծանոթ.4:
 35. Н. А р у т ю н я н. Корпус, с.479сл. и 491.
 36. Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. նշվ.աշխ., էջ.110-111.
 37. Н. А р у т ю н я н. указ.соч., с.490; Ս.Հմայակյան. նշվ.աշխ., էջ.48-50.
 38. Н. А р у т ю н я н. указ.соч., с.477.
 39. Г р. К а п а н ц я н. Об урартском божестве Адаруга. — В. Сб.: Историко-лингвистические работы, т.II, Ер., 1975, с.190слл.
 40. Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. նշվ.աշխ., էջ.434.